ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ առողջապահության նախարարությունը նախաձեռնել է առողջության համապարփակ ապահովագրության (ԱՀԱ) համակարգի ներդրման գործընթաց: 2023 թվականին ընդունվել է ԱՀԱ ներդրման հայեցակարգը: Առողջության համապարփակ ապահովագրության ներդրումը ներառված է նաև Կառավարության 2021-2026 թթ-երի ծրագրում, ինչպես նաև Առողջապահության նախարարության 2023-2026 թթ-երի ռազմավարական ծրագրում: Ռազմավարական ծրագրերի միջոցառումներով նախատեսվում է, որ ԱՀԱ կներդրվի փուլային՝ սկսած 2024թ-ից, իսկ 2023 թվականը համարվում է ԱՀԱ ներդրման նախապատրաստման տարի, որի ընթացքում պետք է իրականացվեն հիմնական և նվազագույն ծառայությունների փաթեթներում ներառվող առողջապահական ծառայությունների և նորմատիվների հաշվարկման մեթոդաբանության մշակում/վերանայում, ինչպես նաև դրանց ծախսերի կառուցվածքին համապատասխան ծախսերի հաշվարկում:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, ԱՀԱ փորձարկման փուլի ներդրմանը պատրաստ լինելու նպատակով, Առողջապահության նախարարությանն անհրաժեշտ է խորհրդատվության իրականացում համապատասխան մասնագետների ներգրավմամբ՝ սույն աշխատանքի նկարագրով նախատեսված գործողությունները սահմանված ժամկետներում իրականացնելու, ինչպես նաև ԱՀԱ ներդրման այլ միջոցառումներով նախատեսված ուղղություններով առողջապահության տնտեսագիտության, ֆինանսավորման և հաշվապահական հաշվառման հարցերով խորհրդատվություն տրամադրելու նպատակով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Առողջության Համապարփակ Ապահովագրության ներդրման հետ կապված առողջապահական ծառայությունների և դեղերի գների, նորմատիվների հաշվարկման մեթոդաբանության մշակման խորհրդատվության տրամադրում, այդ թվում

1. Հիմնական և նվազագույն ծառայությունների փաթեթներում (ՀԾՓ և ՆԾՓ) ընդգրկված ծառայությունների և ծախսերի նորմատիվների հաշվարկման առկա մեթոդաբանությունների ուսումնասիրություն, դրանց վերանայման/մշակման առաջարկությունների ներկայացում:

2. Ծառայությունների ծախսերի հաշվարկման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման ձևաչափերի ճշգրտում՝ հիմք ընդունելով գործելակարգերով ներկայացված ծախսերի առանձնահատկությունները:
3. Գների հաշվարկման մեթոդաբանության համաձայն տվյալների հավաքագրման աշխատանքների ընթացիկ հսկողություն, պարզաբանումների տրամադրում, ձևաչափերում լրացված տվյալների տրամաբանական և վիճակագրական ստուգումների և դրանց ճշտումների կատարում:
4. Հավաքագրված և ներմուծված տվյալների հիման վրա հաշվարկների իրականացմանը մասնակցություն՝ հիմնվելով հաստատված մեթոդաբանությունների վրա:
5. Իրականացված հաշվարկների հիման վրա ամփոփ տվյալների տրամադրում՝ ներառելով ծախսերի կառուցվածքը, դրանց տեսակարար կշիռները ծառայության գնում, հաշվարկներում մասնակցող հիմնական ցուցանիշների մեծությունները:
6. Գների հաշվարկման էլեկտրոնային գործիքի մշակմանը աջակցում, դրանում ներառված շտեմարանների և տվյալների տրամաբանական և տեսողական վերահսկում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Փորձագետի աշխատանքից ակնկալվում է ստանալ հետևյալ արդյունքները;

1. Ամսեկան հաշվետվություն աշխատանքի նկարագրում ներկայացված աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ:
2. Ծառայությունների գների լրացված մուտքային ֆորմաների նախապատրաստում, տրամադրում համապատասխան մասնագետներին, դրանցում ներառված տվյալների ստուգումների իրականացում::

Բացի վերը նշված աշխատանքներից, փորձագետը, ըստ անհրաժեշտության, առողջապահության ֆինանսավորման խորհրդատուի/թիմի ղեկավարի կողմից կարող է ներգրավվել ԱՀԱ ներդրման ապահովմանն ուղղված միջոցառումներին վերաբերող խորհրդակցությունների, հանդիպումների, քննարկումների ընթացքում իր աշխատանքի նկարագրով սահմանված աշխատանքների ներկայացման և այլ նպատակով:

Փորձագետը նաև պետք է մասնակցի սույն աշխատանքի նկարագրով պայմանավորված պրեզենտացիա/ների կազմմանը, նկարագրելով առաջ քաշված մոտեցումները և տրված լուծումները:

ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- Առնվազն բարձրագույն կրթություն տնտեսագիտության, ֆինանսների, հաշվապահական հաշվառման բնագավառում,
- Առնվազն 10 տարվա փորձառություն առողջապահության բարեփոխումների, այդ թվում ֆինանսավորման մեխանիզմների փոփոխություններին
- առողջապահության ֆինանսական տեղեկատվական համակարգերի հետ աշխատանքի առնվազն 10 տարվա փորձառություն
- Առնվազն 10 տարվա փորձ բժշկական կազմակերպությունների հետ աշխատանքի, այդ թվում բժշկական կազմակերպություններում կառավարման փորձառություն
- Տվյալների վերլուծություններ իրականացնելու հատուկ փորձ՝ տվյալների բազաների կառուցման, ձևաչափերի մշակման, տվյալների համադրումներ իրականացնելու պրակտիկ և վարժ ունակություններ
- Հայերենի, Ռուսերենի և Անգլերենի լավ իմացություն, համակարգչային գիտելիքներ մայքրոսոֆթ օֆիսից, ինտերնետ բրոուզերներից, օնլայն հարթակներից օգտվելու և դրանց հետ աշխատելու կարողություններ, օրենքների, ենթաօրենսդրական փաստաթղթերի վերաբերյալ ստացված կարծիքների ամփոփման, դրանց մշակման, մոտեցումները հիմնավորելու կարողություններ, հաշվետվությունների նախապատրաստման հմտություններ, ճնշման տակ և ըստ անհրաժեշտության ծանրաբեռնված աշխատելու ունակություններ: